

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ**

ՎԼԱԴԻՄԻՐ ՆԱՋԱՐՅԱՆ

ՍՍՀՄ նոր սահմանադրության կարևոր բնորոշ կողմը սովետական քաղաքացիների սահմանադրական ստատուսի ընդլայնումն է, նրանց հիմնական իրավունքների, ազատությունների և պարտականությունների բովանդակության խորացումը, դրանց ապահովման նյութական, քաղաքական, գաղափարական և իրավական երաշխիքների հետագա կատարելագործումը և ամրապնդումը:

ՍՍՀՄ քաղաքացիների սահմանադրական նոր իրավունքների շարքում ուրույն տեղ է գրավում նրանց պատվի և արժանապատվության, կյանքի և առողջապահության, անձի ազատության և գույքի դեմ կատարված ոտնձգություններից ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ, որը, ի. Ի. Բրեժնևի արտահայտությամբ, անհատի իրավունքների սահմանադրական երաշխիքների զգալի լրացում է¹:

Քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանության ինստիտուտը ծագել և ձևավորվել է սովետական իշխանության հաստատման առաջին տարիներին: Հետագայում այն զարգացվել է՝ սովետական պետության մարմինների մի շարք կարևորագույն ակտերում², ՍՍՀՄ և միութենական հանրապետությունների քաղաքացիական դատավարության հիմունքներում, միութենական հանրապետությունների քաղաքացիական դատավարության օրենսգրքերում, վարչական, քրեական, քաղաքացիական, աշխատանքային, հողային և ընտանեկան օրենսդրության մի շարք նորմատիվ ակտերում:

ՍՍՀՄ քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանության ինստիտուտը չպետք է շփոթել ՍՍՀՄ նոր սահմանադրության 158 հոդվածում ամրապնդված մեղադրյալի պաշտպանության իրավունքի հետ: «Եթե 158 հոդվածում նախատեսված իրավունքը,— գրում է է. Մուրադյանը,— մեղադրյալի իրավունք է, մի մարդու, որը ստիպված է պաշտպանվելու, ապա 57 հոդվածը դատական պաշտպանությունը բնութագրում է ընդլայնված ձևով՝ այն չկապելով ո՛չ մեղադրանքի առաջադրման և ոչ էլ վրա հասնելիք քրեական պատասխանատվության սպառնալիքի հետ: Դա քաղաքացու իրավունքն է պահանջելու արդարադատություն, հանդես բերելու նախաձեռնություն, գոր-

¹ Լ. Ի. Բրեժնև, ՍՍՀՄ սահմանադրության մասին, Երևան, 1978, էջ 20:

² «СЗ СССР», 1937, № 30, ст. 120, № 43, ст. 182; «Ведомости Верховного Совета СССР», 1961, № 35, ст. 358, № 22, ст. 325.

ծելու ակտիվ, օգտագործելու օրենքով տրամադրված բոլոր միջոցները՝ օրինականության խախտումները վերացնելու համար³։

Պատական պաշտպանության ինստիտուտի օրգանական մասը և տրամաբանական զարգացումն է ՍՍՀՄ սահմանադրության 58 հոդվածի երկրորդ մասում ամրապնդված ՍՍՀՄ քաղաքացիների հիմնական իրավունքը՝ օրենքով սահմանված կարգով դատարանում գանգատարկելու պաշտոնատար անձանց օրենքի խախտմամբ, լիազորությունների սահմանազանցությամբ քաղաքացիների իրավունքները սահմանափակող գործողությունները։

Պաշտոնատար անձանց անօրինական գործողությունները դատարանում գանգատարկելու իրավունքից ՍՍՀՄ քաղաքացիներն օգտվում էին նաև մինչև 1977 թ. սահմանադրության ընդունումը։ Այսպես, ՍՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1937 թ. ապրիլի 11-ի որոշումը ՍՍՀՄ քաղաքացիներին իրավունք էր տալիս դատարանում գանգատարկելու ֆինանսական մարմինների կողմից պետական և տեղական հարկերի ու գանձույթների, ինչպես նաև պարտադիր կոպարային ապահովագրության և ինքնահարկման ապառքները բռնագանձելու որոշումները։ Համաձայն ՍՍՀՄ Կենտգործկոմի 1937 թ. հուլիսի 9-ի որոշմամբ հաստատված ՍՍՀՄ Գերագույն սովետի ընտրությունների կանոնադրության, քաղաքացիներն իրավունք ունեին դատարանում գանգատարկելու տեղական սովետների գործկոմների կողմից ընտրական ցուցակներում ուղղումներ մտցնելու վերաբերյալ իրենց դիմումների մերժումը։ Ավելի ուշ այդ իրավունքը զարգացվեց քաղաքացիական-դատավարական (քաղաքացիական կացության ակտերի գրանցումների անճշտությունների պարզելը, նոտարիական գործողությունների դեմ գանգատարկելու իրավունքը և այլն), ինչպես նաև բնակարանային, աշխատանքային, հողային և ընտանեկան օրենսդրության մեջ⁴։

Հարց է առաջանում, թե ի՞նչ նորույթ մտցրեց ՍՍՀՄ 1977 թ. սահմանադրությունն այս բնագավառում։ ՍՍՀՄ նոր հիմնական օրենքը սահմանադրական աստիճանի բարձրացրեց այդ իրավունքը և նախատեսեց հատուկ օրենք ընդունել պաշտոնատար անձանց՝ օրենքի խախտմամբ, լիազորությունների սահմանազանցությամբ քաղաքացիների իրավունքները սահմանափակող գործողությունները դատարանում գանգատարկելու կարգի մասին⁵։

Դա ամենից առաջ նշանակում է ՍՍՀՄ քաղաքացիների այդ իրավունքի ներգործության ոլորտի ընդլայնում։ ՍՍՀՄ քաղաքացիներին իրավունք է վերապահվում դատարանում գանգատարկելու իրենց իրավունքները սահմանափակող և օրենքի խախտմամբ կատարված պաշտոնատար անձանց ամեն մի գործողություն, և ոչ թե դրանցից միայն մի քանիսը, ինչպես նախատեսված է գործող օրենսդրությամբ։ Նկատենք, որ այսօրվա վիճակով քաղաքացին իրավունք չունի դատարանում գանգատարկելու միլիցիայի մարմինների կողմից իրեն տվյալ բնակավայրում գրանցվել անօրինական ձևով մերժելու, սոցիա-

³ Թ. Մ. Мурадян, Судебный контроль за административными актами («Советское государство и право», 1978, № 11, էջ 75)։

⁴ Պաշտոնատար անձի գործողությունների գնահատականը, նրանց իրավաչափ կամ ոչ իրավաչափ լինելը, օրինականության խախտման աստիճանը և հետևանքները դատարանը պարզում է նաև քրեական գործերով (իշխանությունը կամ պաշտոնական գիրքն ի շար գործ գնելը, իշխանազանցությունը կամ պաշտոնական լիազորությունների սահմանն անցնելը, անփութությունը (ՀՍՄՀ քր. օր. 182—184 հոդ.))։

⁵ «Ведомости Верховного Совета СССР», 1977, № 51, ст. 764.

լական ապահովության մարմինների կողմից իրեն անօրինական ձևով կենսաթոշակ չնշանակելու կամ պակաս չափով նշանակելու, պետական ավտոտեսչության մարմինների կողմից քաղաքացուն տրանսպորտի միջոցներ վարելու իրավունքից անօրինական ձևով ղրկելու, առողջապահության, լուսավորության կամ ժողովրդական կրթության մարմինների կողմից երեսային մանկամսուր, մանկապարտեզ կամ գիշերօթիկ դպրոց ընդունելն անհիմն կերպով մերժելու, բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունվելն անօրինական կերպով մերժելու դեպքերը, ֆինանսական մարմինների որոշումները՝ անհատական աշխատանքային դործունեության մասին զբաղվող անձանցից հարկեր գանձելու հարցում, անօրինական ձևով բնակարանային հերթագրման չվերցնելը և այլն: Կասկածից դուրս է, որ քաղաքացու դատական պաշտպանության իրավունքը սահմանադրական աստիճանի բարձրացնելը դրա ներգործությունը կտարածի նաև այս և բազմաթիվ այլ հարցերի վրա:

Ավելին, նույնիսկ այն ոլորտներում, որտեղ օրենսդրության մեջ նախատեսված է քաղաքացու իրավունքների դատական պաշտպանության հնարավորություն, կատարված են այնպիսի էական բացառություններ, որոնք մի շարք քաղաքացիների փաստորեն զրկում են այդ իրավունքից: Այսպես, ՍՍՀՄ Դերագույն սովետի նախագահության 1974 թ. մայիսի 29-ի հրամանագրով հաստատված «Աշխատանքային վեճերի քննության կարգի մասին կանոնադրությունը» չնայած սահմանում է այդ վեճերի լուծման դատական կարգ, սակայն իր 11 և 41 հոդվածներում սահմանված էական բացառություններով բազմաթիվ քաղաքացիների զրկում է իրենց աշխատանքային իրավունքը դատարանում պաշտպանելու իրավունքից: Ըստ որում, դատական պաշտպանություն չտրամադրելու համար մի դեպքում հիմք է ծառայում քաղաքացու զբաղեցրած պաշտոնը (հոդ. 41), մեկ այլ դեպքում՝ վեճի օբյեկտը (հոդ. 11), երրորդ դեպքում՝ տվյալ կազմակերպությունում կարգապահական կանոնադրի առկայությունը (հոդ. 41, կետ «բ»): Գործնականում «աշխատանքային օրենսդրության կիրառումը որոշ հարցերի լուծման ժամանակ կազմում է աղմի-նիստրացիայի (երբեմն ֆարրիկա-գործարանային տեղական կոմիտեի հետ համատեղ) բացառիկ իրավասությունը»⁶:

Դա իհարկե չի նշանակում, թե վերը նշված հարցերով ՍՍՀՄ քաղաքացիներն ընդհանրապես զուրկ են գանգատարկման իրավունքից: Համաձայն գործող օրենսդրության, նրանք կարող են այդ հարցերով իրենց գանգատները ներկայացնել վերադասության կարգով, որը նույնպես ամրապնդված է ՍՍՀՄ 1977 թ. սահմանադրության մեջ՝ որպես քաղաքացու հիմնական իրավունք⁷: Այսպիսով, ՍՍՀՄ քաղաքացին իրավունք ունի պաշտոնատար ան-

⁶ С. А. Иванов, Р. З. Лившиц, Конституция СССР и вопросы трудового права («Советское государство и право», 1978, № 4, էջ 23):

⁷ Համաձայն ՍՍՀՄ սահմանադրության 49 հոդվածի «ՍՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի պետական մարմիններին և հասարակական կազմակերպություններին առաջարկություններ ներկայացնելու նրանց գործունեության բարելավման վերաբերյալ, քննադատելու աշխատանքի թերությունները: 58 հոդվածում ասված է, որ «ՍՍՀՄ քաղաքացիներն ունեն պաշտոնատար անձանց, պետական և հասարակական մարմինների գործողությունները ղանգատարկելու իրավունք: Գանգատները քննության պետք է առնվեն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում»:

ձանց, պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների՝ իր իրավունքները սահմանափակող օրինազանց դործողությունների դեմ զանգատարկելու ինչպես վարչական (վերադասության), այնպես էլ դատական կարգով:

ՍՍՀՄ 1977 թ. սահմանադրության 58 հոդվածի երկրորդ մասից ուղղակիորեն բխում է պաշտոնատար անձանց, պետական և հասարակական մարմինների գործողությունների նկատմամբ դատական վերահսկողության ոլորտի ընդլայնման պահանջը: Հարց է առաջանում. ինչո՞վ բացատրել դատական յուրիսդիկցիայի շրջանակների՝ նման ընդլայնումը: Զի՞ կարելի արդյոք դրանում տեսնել որոշակի անվստահության դրսևորում պետական կառավարման ապարատի նկատմամբ:

Ամենից առաջ անհրաժեշտ է ընդգծել քաղաքացու իրավունքների պաշտպանության դատական եղանակի առավելությունները ոչ դատական (վարչական) եղանակի համեմատությամբ: Հանրահայտ է այն մեծ գնահատականը, որ տվել են մարքսիզմ-լենինիզմի դասականները քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանության ինստիտուտին: Ֆ. էնգելսը գտնում էր, որ «Բոլոր աստիճանավորների պատասխանատվությունը իրենց ծառայական գործերի համար սովորական դատարանների առջև, ընդհանուր իրավունքի հիման վրա» ամեն մի ազատության առաջին պայմանն է՝ Վ. Ի. Լենինը դեռևս 1902 թ. առաջարկում էր Ռուսաստանի դեմոկրատական հանրապետության սահմանադրության մեջ «յուրաքանչյուր քաղաքացու իրավունք տրամադրել դատարանի առջև հետապնդելու աստիճանավորներին, առանց նրանց պետերին գանգատարկելու»⁸: ՍՍՀՄ նոր սահմանադրության մեջ կյանքի են կոչվել սոցիալիստական դեմոկրատիայի վերաբերյալ լենինյան դրույթները և այդ սահմանադրության կարևոր առանձնահատկություններից մեկն էլ արդարադատության դերի բարձրացումն է զարգացած սոցիալիստական հասարակության կյանքում, որպես պետական և հասարակական կյանքի իրավական հիմքերի ամրապնդման կարևոր միջոցի:

Դատավարության հրապարակայնությունը, կողմերի իրավահավասարությունը, մրցակցությունը, պաշտոնատար անձանց անօրինական գործողությունների վերաբերյալ գործերով դատաքննությանը դատախազների պարտադիր մասնակցությունը, պաշտոնատար անձի պարտականությունը՝ ներկայանալ դատարան, հրապարակայնորեն պատասխան տալ, դատարանին ներկայացնել փաստաթղթեր և ապացույցներ, փաստարկել իր գործողությունները, իր կողմից քաղաքացու խնդրանքը մերժելը, գործերի կոլեգիալ լուծումը անկախ և միայն օրենքին ենթարկվող դատավորների կողմից, կայացրած վճիռը վճռաբեկ կարգով վերանայվելու հնարավորությունը վկայում են քաղաքացիների իրավունքների պաշտպանության դատական եղանակի առավելությունների մասին⁹:

Գրականության մեջ և մամուլում բազմիցս նշվել են քաղաքացիների իրավունքների պաշտպանության վարչական եղանակի թերի կողմերը: «Յուրաքանչյուր աշխատող,— գրում է ՍՍՀՄ դատախազության կոլեգիայի անդամ

⁸ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 34, էջ 103.

⁹ Վ. Ի. Լենին, ՆԺԺ, հ. 6, էջ 206.

¹⁰ Այդ մասին տե՛ս Յ. Մ. Мурадян, նշվ. աշխ., էջ 80.

Ի. Չերմենսկին,— պետք է հնարավորություն ունենա իր աշխատանքային իրավունքի խախտման դեպքում դիմելու դատարանին... նման կոնֆլիկտների քննարկումը ենթակայության կարգով հաճախ անհիմն ձգձգվում է ու կրում քաղաքացիների բնույթ»¹¹, Նույն տեսակետն է արտահայտում նաև ՀԱՄԿԽ-ի իրավաբանական բաժնի վարիչ Վ. Կլեպցովը: «Աշխատանքային վեճերի քննարկման դերատեսչական կարգը,— գրում է նա,— մեր կարծիքով ունի մի ամբողջ շարք էական թերություններ: Մասնավորապես ադմինիստրացիայի գործողությունները վիճարկող աշխատողը ոչ միշտ է կարող անձամբ ներկա գտնվել վերադաս մարմնում իր գանգատի քննարկմանը: Նման գանգատների քննարկումը վերադաս մարմինների ապարատի աշխատողների կողմից մեծ մասամբ կատարվում է միանձնյա ձևով, սոսկ ձեռնարկության կամ հիմնարկության ադմինիստրացիայի ներկայացրած նյութերի հիման վրա»¹²: Մոսկվայի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի աշխատանքային իրավունքի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Ա. Զայկինը գրում է, որ «վեճերի քննարկումը դատարանում, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ապահովում է շատ ավելի մեծ հնարավորություններ դրանց արդարացի լուծման համար, քան երբ դրանք քննարկվում են վերադասի կողմից՝ ենթակայության կարգով»¹³:

Միաժամանակ, քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանության ոլորտի ընդլայնումը երբեք էլ չի նշանակում որևէ անվստահության դրսևորում պետական ապարատի նկատմամբ: Այստեղ հարցի էությունն այն է, որ պետական յուրաքանչյուր մարմին պետք է զբաղվի իրեն ներհատուկ գործերով: Պետական կառավարման մարմինների կողմն է զբաղվել կառավարման բնույթի հարցերի լուծմամբ: Դրանք վեճեր լուծող մարմիններ չեն: Մինչդեռ դատարանը ստեղծված է հենց վեճերի, այդ թվում նաև այն վեճերի լուծման համար, որոնք ծագում են մի կողմից քաղաքացու, մյուս կողմից պետական կառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի միջև: Հետևաբար, ճիշտ կլինի, որ յուրաքանչյուրն զբաղվի իր գործերով: Կառավարման մարմինը՝ կառավարմամբ, իսկ դատարանը՝ վեճերի լուծումով¹⁴:

Ճիշտ չի լինի նաև քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանության ոլորտի ընդլայնումը հասկանալ այնպես, թե դրանով իսկ դատական վերահսկողությունը տարածվում է պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և պաշտոնատար անձանց բոլոր գործողությունների վրա: Կարծում ենք, որ նման հսկողությունը չպետք է տարածվի հիշյալ մարմինների ընդունած նորմատիվ ակտերի, ինչպես նաև նրանց օպերատիվ գործողությունների վրա, քանի որ, հակառակ դեպքում, դատարանը կմիջամտեր

¹¹ «Литературная газета», 10, I, 1979.

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Իրավաբանական գրականության մեջ արտահայտված է այն կարծիքը, որ «կառավարման մարմնի գործն ամենից առաջ ընդհանուր խնդիրներ լուծելն է: Այդ բնագավառը նրա բացառիկ իրավասության ոլորտն է կաղմում: Իր լիազորությունների շրջանակներում կառավարման մարմինը լուծում է նաև անհատական հարցեր: Սա էլ է կաղմում կառավարման մարմնի իրավասությունը, սակայն դա բացառիկ իրավասություն չէ: Այս բնագավառում կառավարման մարմնի գործողություններն օրինականության տեսանկյունից կարող են ստուգվել դատարանի կողմից» («Конституция СССР и расширение судебной защиты прав граждан», «Советское государство и право», 1978, № 11, էջ 65):

այդ մարմինների գործադիր և կարգադրիչ գործունեության ոլորտին, որն անթույլատրելի է: Գրականության մեջ արտահայտվել է այն ճիշտ տեսակետը, համաձայն որի ռեալիտարանի իրավասությանը պետք է վերադասվի քննարկելու պետական մարմնի, հասարակական կազմակերպության և պաշտոնատար անձի կողմից քաղաքացու այն խնդրանքների մերժումը, որոնց բավարարումը կազմում է պետական մարմնի, հասարակական կազմակերպության և պաշտոնատար անձի պարտականությունը¹⁵: Ծիշտ է նաև այն տեսակետը, որ ռեալիտար օրենքի ոլորտին չպետք է դասվի հետաքննական, նախաքննական և դատախազական մարմինների գործողությունների գանգատները, քանի որ այդ հարցերը կարգավորվում են քրեական դատավարական օրենսդրությամբ¹⁶:

ՍՍՀՄ նոր սահմանադրության մեջ պաշտոնատար անձանց անօրինական գործողությունների դեմ դատարանում քաղաքացիների գանգատարկելու հիմնական իրավունքի սահմանումը, ինչպես նաև այդ կապակցությամբ նոր օրենքի ընդունման պահանջը տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք խնդիրներ է դնում իրավաբանական գիտության առջև: Դա մասնավորապես վերաբերում է այդ հոդվածում տեղ գտած սահմանադրական դրույթի ճիշտ մեկնաբանմանը, այն հարցին, թե ինչ նկատի ունի սահմանադրությունը «օրենքով սահմանված կարգով» արտահայտության տակ: Գրականության մեջ արտահայտվել է այն կարծիքը, որ այդ տերմինը կարելի է հասկանալ երկու ձևով. 1) տառացիորեն՝ կարծել, որ սահմանադրական պահանջը վերաբերում է սոսկ քաղաքացիների՝ դատարանին ուղղված գանգատների ընդունման, քննարկման և լուծման կարգի սահմանմանը և 2) հիշյալ դրույթը կարելի է մեկնաբանել նաև որպես ապագա օրենքում հնարավոր այն բոլոր դեպքերի ավարտուն, օրինակելի կամ համառոտ ցանկի ամրապնդման պահանջ, որոնց առկայության դեպքում քաղաքացուն իրավունք է վերապահվում դատարանում գանգատարկելու պետական մարմնի, հասարակական կազմակերպության կամ պաշտոնատար անձի անօրինական գործողությունը¹⁷:

Ինչ վերաբերում է առաջին մեկնաբանմանը, ապա նման կարգ արդեն իսկ սահմանված է գործող օրենսդրության մեջ¹⁸ և հազիվ թե ՍՍՀՄ նոր սահմանադրության դրույթը նկատի ունի հարցի սոսկ դատավարական ասպեկտը: Ինչ խոսք, պետական մարմնի, հասարակական կազմակերպության և

¹⁵ Նույն տեղում, էջ 66: «Դատական իրավասությանը չպետք է վերադասվի այն խնդիրների առիթով տրվող գանգատները, որոնց քննարկումը և բավարարումը պետական մարմնի, հասարակական կազմակերպության և պաշտոնատար անձի պարտականությունը չի կազմում» (նույն տեղում):

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ А. А. Мельников, Право граждан обжаловать в суд действия должностных лиц («Советское государство и право», 1978, № 11, էջ 69):

¹⁸ Եթե սահմանադրության մեջ նկատի առնվեր արդեն իսկ օրենսդրությամբ սահմանված կարգը, ապա «մենք գործ կունենայինք,— գրում է Ս. Զիվսը,— գործող օրենսդրության սահմանափակ կապակցության հետ, որը ո՛չ համապատասխանում է սահմանադրության և ընթացիկ օրենսդրության հարաբերակցությանը իրավունքի աղբյուրների հիերարխիայում, ո՛չ էլ բուն սահմանադրության ստեղծագործական պոտենցիալի մանրակրկիտացման և զարգացման հնարավորությանը» (С. Л. Зивс, Конституция СССР в системе советского законодательства, «Советское государство и право», 1978, № 6, էջ 143):

պաշտոնատար անձանց անօրինական գործողությունների դեմ դատարանում քաղաքացիների դանգատարկելն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք, անշուշտ, պետք է հաշվի առնվեն գործող քաղաքացիական-դատավարական օրենսդրությունը սահմանադրության ոգով կատարելագործելիս: Սակայն, ինչպես իրավաքիորեն դատում է ՍՍՀՄ ԳԱ պետության և իրավունքի ինստիտուտի ղեկավար խորհուրդը, «վարչական մարմինների գործողությունների նկատմամբ գանգատների դատավարական բնույթը նույնական է հայացային գիմումների դատավարական բնույթին» և «դա պետք է լինի հայցային դատավարություն»¹⁹, որը մանրակրկիտ կարգավորված է գործող օրենսդրությամբ:

Սահմանադրական դրույթի պահանջից չի բխում նաև, թե պլանավորվող օրենքում պետք է սահմանել պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և պաշտոնատար անձանց այն գործողությունների ցանկը, որոնք կատարվել են օրենքի խախտմամբ, լիազորությունների սահմանազանցմամբ և սահմանափակել են քաղաքացու իրավունքները: Նման պահանջի դեպքում սահմանադրության դրույթը կունենար այլ ձևակերպում. «օրենքով սահմանված դեպքերում» (հոդ. 157) կամ «օրենսդրությամբ նախատեսված դեպքերում» (հոդ. 161): Հետևաբար, պետք է համաձայնվել այն տեսակետի հետ, որ «պլանավորվող օրենքում, սահմանադրությանը ճիշտ համապատասխան, չպետք է լինի դատարանին ենթակա գանգատների ո՛չ համառոտ, ո՛չ օրինակելի և ո՛չ էլ ավարտուն ցանկ»²⁰:

Ինչպե՞ս հասկանալ 58 հոդվածի երկրորդ մասի սահմանադրական դրույթը: Նրանում դատական գանգատարկման ենթակա պաշտոնատար անձանց գործողությունները բնութագրված են հետևյալ երեք հատկանիշներով. 1) դրանք պետք է կատարված լինեն օրենքի խախտմամբ, 2) լիազորությունների սահմանազանցմամբ, 3) սահմանափակեն քաղաքացիների իրավունքները: Դժվար չէ նկատել, որ վերջին երկու հատկանիշներն առաջին հատկանիշի՝ օրենքի խախտման, մասնավոր դեպքերն են: Այսպիսով, այն հիմնական շափանիշը, որով սահմանադրությունն առանձնացնում է պաշտոնատար անձանց՝ դատարանում գանգատարկման ենթակա գործողությունները, դրանց հակաօրինական, իրավախախտ բնույթն է: Այստեղից ուղղակիորեն բխում է, որ ՍՍՀՄ քաղաքացին իրավունք ունի դատարանում գանգատարկելու պետական մարմնի, հասարակական կազմակերպության կամ պաշտոնատար անձի ամեն մի իրավախախտ հակաօրինական գործողություն, որը սահմանափակում է նրա իրավունքները:

Նման հարցադրումը հանգեցնում է դատական գանգատարկման սուբյեկտների շրջանակի ընդլայնմանը: Պաշտոնատար անձի անօրինական գործողությունները կարող են գանգատարկվել ոչ միայն այն քաղաքացու կողմից, որի իրավունքը դրանց օրինախախտ լինելու հետևանքով սահմանափակվել է, այլ նաև մեկ այլ քաղաքացու կողմից: Գրականության մեջ կարծիք է հայտնվել, որ ճիշտ այնպես, ինչպես անսահմանափակ է պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ու պաշտոնատար անձանց գործողությունների դեմ արտադատական գանգատարկման շրջանակը,

¹⁹ «Советское государство и право», 1978. № 11, էջ 67:

²⁰ Նույն տեղում, էջ 65:

այնպես էլ պետք է անսահմանափակ լինի նման գործողությունների դեմ դատական գանգատարկման շրջանակը²¹։ Նման տեսակետի հետ չպետք է համաձայնվել, քանի որ այն անտեսում է պետական վերահսկողության այլ եղանակների գոյությունը, ինչպես նաև հաշվի չի առնում դատարանի՝ որպես արդարադատություն իրականացնող մարմնի, առանձնահատուկ ֆունկցիաները և յուրօրինակ իրավական վիճակը²²։

Կասկածից դուրս է, սակայն, այն, որ ապագա օրենքում պետք է օգտագործվի ոչ թե այսպես կոչված դեպքերի սկզբունքը, երբ օրենսդիրը թվարկում է հնարավոր այն դեպքերը, որոնց կապակցությամբ քաղաքացիներն իրավունք ունեն գանգատարկելու դատարան, այլ՝ ընդհանուր սկզբունքը, երբ քաղաքացուն իրավունք է վերապահվում դատարանում գանգատարկելու պետական մարմնի, հասարակական կազմակերպության և պաշտոնատար անձի՝ քաղաքացու իրավունքները սահմանափակող ամեն մի օրինախախտ գործողություն, եթե նման գանգատարկման համար օրենքում այլ արտադատական կարգ չի սահմանված։ Նման մոտեցումը համապատասխանում է քաղաքացիական դատավարության ոգուն, որի կանոնները միշտ էլ ընդհանուր սկզբունքներ են, որոնք անհրաժեշտության դեպքում նաև բացառություններ են նախատեսում։ Մյուս կողմից, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ եթե օրենքի կողմից սահմանված ընդհանուր կանոնից կատարված բացառությունների քանակը մեծ է և դրանք որակ են կազմում, ապա «ընդհանուր սկզբունքը» մեխանիկորեն վերածվում է դեպքերի սկզբունքի»²³։

Ակնհայտ է, որ ապագա օրենքում տեղ գտնելիք նորմերը պետք է լինեն սահմանադրության 58 հոդվածի երկրորդ մասի դրույթի հետագա կոնկրետացումը։ Ի՞նչ ճանապարհով կարելի է իրականացնել դա։ Պետական մարմնի, հասարակական կազմակերպության կամ պաշտոնատար անձի անօրինական գործողությունների հետևանքով փաստորեն խախտվում (սահմանափակվում է) քաղաքացու սուբյեկտիվ իրավունքը։ Նման խախտումը կարող է ունենալ հետևյալ դրսևորումներից որևէ մեկը. ա) խոչընդոտներ են ստեղծվում քաղաքացու կողմից իրեն պատկանող սուբյեկտիվ իրավունքը իրականացնելու համար, բ) խտրվում է արդեն իսկ իրականացման պրոցեսում գտնվող սուբյեկտիվ իրավունքը, գ) անօրինական ձևով քաղաքացու վրա գրվում են որոշակի պարտականություններ և դ) քաղաքացին ենթարկվում է վարչական ներգործության միջոցների²⁴։

Սահմանադրական նորմի կոնկրետացման եղանակ է նաև իրավական հարաբերությունների այն ոլորտների թվարկումը, որոնցում կարող են տեղի

21 Զ. Մ. Мурадян, նշվ. աշխ., էջ 77։

22 Քննարկման արժանի են հեղինակի նաև այն դատողությունները, որ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և պաշտոնատար անձանց օրինազանց գործողությունների դեմ քաղաքացիների՝ դատարանին ուղղված դանդաղների շարժառիթները չպետք է սահմանափակվեն անձնական շահերի շրջանակներով և որ «հանուն հասարակական շահերի, հանուն օրինականության շահերի հայցը պետք է ճանաչում ստանա» (նույն տեղում)։

23 Այդ երևույթին կարելի է հանդիպել գործող աշխատանքային օրենսդրության մեջ։ «Վերջին ժամանակներս,— գրում է Ա. Զալկինը,— դատական յուրիսդիկցիայից հանված գործերի ցանկն այնքան է ընդլայնված իր ծավալով, որ բացառությունները տարածվել են աշխատավորների բավական մեծ շրջանակի վրա» («Литературная газета», 10. I. 1979)։

24 «Советское государство и право», 1978, № 11, էջ 77։

ունենալ քաղաքացու սուբյեկտիվ իրավունքների խախտումներ, Կարծում ենք, որ պլանավորվող օրենքում անհրաժեշտություն կա մեկ առ մեկ թվարկելու այդ ոլորտները, որով, անշուշտ, կոնկրետացում կմտցվի սահմանադրական գրույթի բովանդակության մեջ:

Հարց է առաջանում. արդյո՞ք պաշտոնատար անձանց, պետական ու հասարակական մարմինների անօրինական գործողությունների որոշակի տեսակների գանգատարկման համար միայն արտադատական կարգի սահմանումը չի՞ ռոտնահարում քաղաքացու դատական պաշտպանության իրավունքը: Ոչ, բանի որ նշված անձանց և մարմինների գործունեության բնույթը այնքան բարդ և բազմակողմանի է, որ չի կարելի ամեն մի առանձին վերցրած դեպքում համարժեք դատական հսկողություն իրականացնել դրանց վրա: Տեղին է հիշել, որ նույնիսկ ոչ բոլոր քաղաքացիական-իրավական վեճերն են (որոնց մասնակիցներից մեկը քաղաքացին է) ենթակա դատարանների իրավասության: Դրա համար էլ ՍՍՀՄ և միութենական հանրապետությունների քաղաքացիական դատավարության հիմունքներում նախատեսված է, որ օրենքով հատուկ նախատեսված դեպքերում քաղաքացիների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է վարչական կարգով²⁵, Թերևս, նոր օրենքի ընդունման կապակցությամբ անհրաժեշտություն կա վերանայելու նման գեյքերի ցանկը՝ դրանց քանակը կրճատելու և նման վեճերի առանձին տեսակների լուծումը դատարանի իրավասությանը վերապահելու միտումով: Սակայն բոլոր դեպքերում քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանության ինստիտուտի ներգործության ոլորտի ընդլայնումը որևէ ձևով չպետք է հանգեցնի նրանց իրավունքների մեկ այլ ոչ պակաս կարևոր՝ արտադատական պաշտպանության ինստիտուտի վերացմանը:

Քաղաքացու իրավունքների դատական պաշտպանության ինստիտուտի դերի բարձրացումը սերտորեն առնչվում է այն վեճերի լուծման ուղիների ընտրության հետ, որոնց համար օրենսդրությունը նախատեսում է թե՛ դատական և թե՛ արտադատական գանգատարկման իրավունք: Մասնավորապես հարց է ծագում, թե ազատ է արդյոք քաղաքացին ընտրելու իր իրավունքների պաշտպանության ցանկացած եղանակը: Գործող օրենսդրության մեջ դատարանը, որպես կանոն, քաղաքացու գանգատն ընդունում է միայն այն դեպքում, երբ գանգատվողն արդեն սպառել է արտադատական կարգով իր խախտված իրավունքը վերականգնելու հնարավորությունը, այլ կերպ ասած՝ քաղաքացին նախապես պարտավոր է իր իրավունքների խախտման դեպքում նախ գանգատարկել վարչական կարգով և մերժում ստանալուց հետո միայն՝ դատական կարգով: Այս կանոնը, իհարկե, ունի որոշ բացառություններ. առանձին դեպքերում (վարչական կարգով տուգանքի նշանակում) քաղաքացուն իրավունք է տրվում անմիջապես դիմելու դատարանին: Գրականության մեջ այս հարցում հայտնվել է այն տեսակետը, որ մի շարք դեպքերում ան-

²⁵ Ներկայումս դատարանին ենթակա չեն այն քաղաքացիական գործերը, որոնք ծագում են փուլված վտանգի տակ գտնվող աններից քաղաքացիներին վտարելու (ՀՍՀՄ քաղ. օր. 341 հոդ.), ինքնակամ կառուցված շինության սեփականության իրավունքի, ազատ բնակատարածությունների բաշխման, քանդման ենթակա շինությունների, պողա-հատապտղային տնկիների և ցանքերի զնահատման կապակցությամբ. («Бюллетень Верховного Суда СССР», 1975, № 5, էջ 3, 9-1970, № 3, էջ 24),

հրաժեշտ է պահպանել գործող կանոնը, այսինքն՝ քաղաքացին նախ պարտավոր է գիմել վարչական, ապա նոր միայն դատական կարգով²⁶։ Կարծում ենք, այս տեսակետի հետ չպետք է համաձայնվել։ Քաղաքացուն պետք է իրավունք վերապահել սովորորեն ընտրելու իր իրավունքների պաշտպանության եղանակը։ Նման դրույթը համապատասխանում է սոցիալիստական իրավունքի զարգացման ներկա պահանջներին, մի իրավունք, որին բնութագրական է դիպուկորեն կարգավորման ընդլայնումը։ Բայց եթե քաղաքացին արդեն իսկ ընտրում է անմիջապես դատարանին գանգատարկելու ուղին, ապա դատարանի կողմից գանգատը մերժվելուց հետո, քաղաքացու համար վերանում է նույն հարցով արտադատական գանգատարկման հնարավորությունը։ Վարչական կարգը կարող է նախորդել դատարանին, սակայն դատարանը չի կարող նախորդել վարչականին²⁷։

Մյուս խնդիրը, որը ծագում է ՍՍՀՄ նոր սահմանադրության 58 հոդվածի երկրորդ մասի դրույթն ընթացիկ օրենսդրության մեջ կոնկրետացնելու կապակցությամբ, քաղաքացու կողմից դատարանին ուղղված գանգատին առաջադրվող պահանջների հարցն է։ Արդյո՞ք դատարանն իրավունք ունի նման գանգատի ընդունումը մերժել դրա «ոչ հիմնավոր» կամ «ոչ կարևոր» լինելու պատճառաբանությամբ։ Կասկածից դուրս է, որ ինչպես դատարանին ուղղված ամեն մի փաստաթղթի, այնպես էլ քաղաքացու գանգատին կարող են առաջադրվել որոշակի իրավական պահանջներ։ Սակայն այդ պահանջները կարող են կրել միայն սոսկ դատավարական և ոչ երբեք նյութական-իրավական բնույթ։ Քաղաքացու գանգատի «հիմնավոր» կամ «անհիմն» լինելը կարող է պարզվել միայն դատաքննության հիման վրա։ Նույնը հավասարապես վերաբերում է նաև քաղաքացու դիմումի կարևորությանը։

Գրականության մեջ արտահայտվել է և այն կարծիքը, որ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և պաշտոնատար անձանց գործողությունների նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է ոչ թե նախորդի, այլ հաջորդի այդ մարմինների ընդունած ակտերին²⁸։ Ըստ որում, դատարանում գանգատարկելը կասեցնում է պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց գործողությունների կատարումը։ Նման տեսակետի հետ չպետք է համաձայնվել, քանի որ քաղաքացու սուբյեկտիվ իրա-

26 Ա. Մելնիկովը գտնում է, որ նման կանոն պետք է սահմանել սոցիալական ապահովության մարմինների, գրանցման մերժման վերաբերյալ միլիցիայի մարմինների, անհատական աշխատանքային գործունեությամբ ղեկավար անձանցից գանձվող հարկի չափերի մասին ֆինանսական մարմինների, ընտրողների ցուցակներում ուղղումներ մտցնելու մասին տեղական սովետների գործկոմների, բնակարան ստանալու հերթագրման, պետական մարմինների կողմից քաղաքացիներից հարկերի և այլ վճարումների թերաթյուններ գանձելու որոշումների կապակցությամբ (А. Мельников. Указ. указ., էջ 73)։

27 Յ. М. Мурадян, նշվ. աղյ., էջ 79։

28 Այս դրույթը հիմնավորելու համար բերվում են ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1961 թ. հունիսի 21-ի հրամանագրի կիրառումը բնութագրող փաստական տվյալներ։ Հայտնի է, որ այդ հրամանագրով վարչական մարմիններին իրավունք տրվեց անվիճելիորեն բռնազանձելու վարչական կարգով սուգանքը, իսկ քաղաքացիներին՝ դատարանում գանգատարկելու այդ մարմինների որոշումները։ Եթե մինչև այդ հրամանագրի ընդունումը (մինչև այդ դատարանի դիմում էր սուգանք նշանակող մարմինը) դատարանում նման գործերի քանակը 1940—1962 թթ. մնացել է անփոփոխ, ապա արդեն 1962 թ. նախորդ տարվա համեմատությամբ դրանց քանակը կրճատվել է 70 անգամ (Д. М. Чечот, Административная юстиция (теоретические проблемы), Л., 1973 էջ 113)։

վունքների սահմանափակումը կարող է արտահայտվել ոչ միայն դրանց անմիջական խախտման, այլ նաև այնպիսի խոչընդոտներ ստեղծելու մեջ, որոնք անհնար են դարձնում դրանց իրականացումը: Հետևաբար, կապված օրինական գործողության բնույթի հետ, դատական վերահսկողությունը կարող է լինել ինչպես նախորդող, այնպես էլ հաջորդող:

Հարցի մյուս ասպեկտս առնչվում է ասմիջական և ոչ անմիջական դատական վերահսկողություն իրականացնելու հնարավորության հետ: Գործող օրենսդրությունն այս հարցում ունի որոշակի ճկունություն: Օրինակ, վարչական կարգով նշանակված տուգանքների գործերով դատարանը ստուգում է տուգանքի օրինականությունը, ինչպես նաև հաշվի առնում տուգանվողի անձը, նրա նյութական գրությունը և այլն և հարցը լուծում է ըստ էության. վերացնում է տուգանքի մասին որոշումը կամ իջեցնում է տուգանքի չափը: Մեկ այլ դեպքում դատարանն ուղղակիորեն չի լուծում հարցը, այլ իր վճռում պարտավորեցնում է համապատասխան պետական մարմին, հասարակական կազմակերպությանը կամ պաշտոնատար անձին՝ վերացնելու քաղաքացու իրավունքը սահմանափակող որոշումը: Կարծում ենք, որ նոր օրենքում պետք է պահպանվի այս ճկունությունը:

Կարևոր է նաև օրենքում սահմանել, որ դատարանում պատասխան պետք է տա ոչ միայն անմիջականորեն օրինական գործողություն կատարած պաշտոնատար անձը, այլ նաև այն վերադասը, որն իր ենթակային կարգադրել է նման անօրինական գործողություն կատարել:

«աղաքացիների սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության ինստիտուտի դերի բարձրացումը և պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների ու պաշտոնատար անձանց գործողությունների նկատմամբ դատական վերահսկողության ոլորտի ընդլայնումն առավել արդիական են դարձնում այն խնդիրները, որոնք կապված են այս կարգի գործերով դատավնիռների և հատկապես դատարանների ընդունելիք մասնավոր որոշումների անշեղ և ժամանակին կատարումն ապահովելու հետ: Գործող օրենսդրությունը դատարանին սահմանափակ հնարավորություններ է տրամադրում իր կայացրած մասնավոր որոշումների կիրառումն ապահովելու պործում: Կարծում ենք, որ պլանավորվող օրենքում դատարանի համար պետք է սահմանել մի շարք նոր լիազորություններ: Մասնավորապես անհրաժեշտ է դատարանին իրավունք տալ, որպեսզի որոշումը ժամանակին կամ լիովին չկատարելու դեպքում այն իրավունք ունենա հրավիրելու համապատասխան պաշտոնատար անձին, նրանից բացատրություններ պահանջելու և անհրաժեշտության դեպքում նրա նկատմամբ կիրառելու հարկադրանքի միջոցներ (տուգանք և այլն): Նման դեպքերում դատարանին պետք է իրավունք տրվի փոխելու մասնավոր որոշման հասցեատիրոջը և այն հղելու այլ, առավել վերադաս մարմինների: Կարծում ենք նաև, որ վճռաբեկության կարգով վերադաս դատական ատյանի կողմից դատարանների կայացրած վճիռների վերանայումը պետք է սահմանվի այս բոլոր գործերով:

ИНСТИТУТ СУДЕБНОЙ ЗАЩИТЫ ПРАВ ГРАЖДАН В СВЕТЕ КОНСТИТУЦИИ

ВЛАДИМИР НАЗАРЯН

Резюме

Закрепление в Конституции СССР права граждан обжаловать в суд действия должностных лиц, связанные с нарушением закона, превышением полномочий и ущемлением прав граждан (ч. II, ст. 58), а также необходимость принятия нового закона о порядке обжалования указанных действий в суд следует рассматривать как одно из проявлений социалистической демократии в условиях развитого социализма. Конкретизацию и детализацию указанного конституционного положения в новом законе, на наш взгляд, необходимо осуществить двумя способами: путем указания тех отраслей правоотношений, где совершаются незаконные действия должностных лиц, и установления основных форм проявления ущемления прав граждан в результате этих действий.